ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է սահմանված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, գալիս է այն եզրահանգման, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն նախապես վճարված պետական տուրքի գումար:

Անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է բավարարման, գալիս է այն եզրահանգման, որ Դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը, վճռի կատարումից հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. ԱՁ Անուշ Էդվարդի Պետրոսյանի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ կողմերի միջև 11.10.2023 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՊՎԵՐ/2023/Հ-70» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1 ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից 03.11.2023 թվականի ծանուցմամբ կայացված պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին որոշումը ճանաչել անվավեր:

2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ ԱՁ Անուշ Էդվարդի Պետրոսյանի բռնագանձել՝ 30.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը, վճռի կատարումից հետո այն վերացնել:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**